



Սիպիլ

Հնչյակ

Տեսած եք ամպն որ կը սուրա հյուսիսեն
Աներևույթ հաղթ ուժե մը մրրկած.
Ի՛նչ պայքարներ իր ընգերքը կը հուզեն.
Իր ծոցին մեջ՝ ի՛նչ փայլակներ, բոց ու կայծ:

Կը կոծկոծի, կը գալարվի, կը գոռա,
Ամպրոպներում հորձանքներ դուրս կը ժայթին.
Հետո հեղեղ մը կը զեղու մեր վրրա,
Քայքայելով փխրուն երազն իր կյանքին:

Անհունություն մը կա իմ մեջս անձանոթ,
Որուն հոգվույս նեղ պատյանը չի բավեր.
Կը բեկբեկի, կը ճնլվի, կ'այրունի,

Կը փշրվի, ինչպես ամպե նուրբ անոթ,
Իր մեջ մըղված խեղ պայքարեն կարեվեր.
Բայց այդ ահեղ մրրիկներուն պետք ունի:

1913